կացնել նրան ամեն բան, բայց ո՛չ ոք խորհուրդ չտուեց. իսկ եղբայրներս աղաչում էին ինձ, որ մթնելուն պէս սենեակից երբէք դուրս չգամ։ Վերջապէս մի երկու քաջերին խրախուսեցի, համոզեցի և ուղարկեցի ուր հարկն է, որ բերանացի խօսեն և յայտնեն ինչ-որ պէտք է։ Գնացող երիտասարդները լուր բերին, թէ գաւառական ոստիկանը բացակայ էր, իսկ նրա օգնականը խոստացաւ կտրուկ միջոցներ ձեռք առնել և անյապաղ կարգադրել ինչ-որ պէտք է։

Հէնց այդ օրը աւազակապետի մայրը մօտեցաւ ինձ և պարսկական խորամանկ կեղծաւորութեամբ իմ քէֆս ու առողջութիւնս հարցնելուց յետոյ, ասաց ժպտալով. «Տէրտէր աղա, Ե՞րբ պիտի գնաք և ո՞ր ճանապարհով»։—Ի՞նչ շատ էք հետաքրքրւում իմ գնալու ժամանակի և ճանապարհի մասին, ասացի. չլինի՞ թէ ձեր քաջ որդին կամենում է ինձ կողոպտել և սպանել։—Ո՛չ, Աստուած չանէ, ասաց կեղծ ժպիտով այլանդակ թրքուհին։ Իմ որդիս ուզում է ձեզ պատուել ու յարգել, իւր ընկերներով ուղեկցել ձեզ հետ, որ ո՛չ ոք չհամարձակուի ձեզ մօտենալ, որպէսզի անփորձ հասնէք մինչև երկաթուղու կայարան։—Շնորհակալ եմ ձեր որդու անչափ հոգատարութեան համար, որ այդ աստիճան անհանգիստ է լինում իմ և զաւակներիս մասին. իմ կողմից յայտնեցէք իրեն, որ ես պիտի մնամ մի քանի ամիս և ապա կգնամ նոր շինուած արքունական ճանապարհով։ Հետևեալ օրը, ծպտեալ կերպով, զինուած երկու հարազատներիս ուղեկցութեամբ